

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՆՆԱ ՎԱՐԱՁԴԱՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ատենախոսության բեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աննա Լևոնի Ասլանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վարդան Ալբերտի Սարգսյան

Տնտեսագիտության թեկնածու,
Հասմիկ Ռաֆիկի Սայադյան

Առաջատար կազմակերպություն՝

Հայաստանի ազգային ազդարային
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թ. սեպտեմբերի 19-ին, ժամը՝
15¹⁰-ին՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի
տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Մ. Նալբանդյան փող., 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2013թ. օգոստոսի 16-ին:

014 մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար, տ.գ.դ., պրոֆեսոր՝



Ա.Լ. Ասլանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության բեմայի արդիականությունը: Ներկայումս երկրների և տաշընթացը պայմանավորված է տնտեսության և սոցիալական ոլորտի՝ բարձրորակ մասնագիտական կարողեղով ապահովվածությամբ: Գիտելիքների կիրառումը դարձել է սոցիալ-տնտեսական առաջընթացի հիմնական գործոնը: Պետությունների զարգացման մակարդակը և դիրքն ևտավելապես գնահատվում է նրանց մտավոր ներուժով, հետևաբար նաև կրթական համակարգի զարգացման աստիճանով: Հասարակությունը մշտապես շահագրգռված է ունենալու կրթության արդիական համակարգ, որը հնարավորություն է տալիս ոչ միայն ձևավորել մարդ-քաղաքացի, այլ նաև պատրաստել մասնագետներ, որոնք սոցիալ-տնտեսական կյանքի շարժիչ ուժն են:

Մեր երկիրը, իր տրամադրության տակ ունենալով սահմանափակ բնական ռեսուրսներ և ներդրումային հնարավորություններ, կրթական ոլորտը դիտարկում է որպես առաջնային և զարգացումն ապահովող հիմնական գործոն: Մասնագիտական կարգերի և գիտելիքների ձևավորման անհրաժեշտ պայմանը բարձրագույն կրթությունն է, որի զարգացումը կարևոր ազգային առաջնայնություններն է: Դա բարձրագույն կրթության համակարգից պահանջում է նոր որակի մասնագետների: պատրաստում և նրանց առավել համապատասխանեցում աշխատանքի շուկայում ձևավորվող պահանջներին: Ներկայումս շուկայական մեխանիզմներն ու հարաբերություններն ակտիվորեն ներթափանցում են նաև այս ոլորտ, ինչը պայմանավորված է բարձրագույն կրթության նկատմամբ գոյություն ունեցող և մշտապես աճող պահանջարկով, որակյալ մասնագետների պատրաստման հետ կապված ծախսերի աճով, կրթության բարձր որակի նկատմամբ ձևավորվող հասարակական պահանջարկով, ինտելեկտուալ գործընթացով:

Բարձրագույն կրթության ոլորտում պահանջվող փոփոխություններն առաջադրում են լուրջ և հիմնավոր հետազոտությունների իրականացման անհրաժեշտություն: Հատկապես, անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել բարձրագույն կրթության կառավարման առանձնահատկությունները շուկայական տնտեսության պայմաններում՝ եղնելով Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության համակարգի վիճակից և զարգացման միտումներին, համաշխարհային փորձից՝ բացահայտելով կրթական ծառայությունների շուկայի յուրահատկությունները: Ոլորտն ուսումնասիրելու անհրաժեշտությունը պայմանավորված է նաև բարձրագույն կրթության համակարգում կառավարման դերի և արդյունավետության բարձրացման կարևորությամբ, քանի որ կառավարման կառուցվածքը և կարգավորող իրավական դաշտը բարեփոխումների այս փուլում հանդիսանում են բարձրագույն կրթության համակարգի զարգացման առանցքը:

ՀՀ բարձրագույն կրթության կառավարման հիմնախնդիրների շրջանակը չավազանց լայն է, սակայն արդիական են համարվում՝ ոլորտը կարգավորող իրավական դաշտի, կրթության որակի ապահովման, ֆինանսավորման և կրթության մենեջմենթի զարգացման հիմնախնդիրները: Հաշվի առնելով Բոլոնյան գործընթացի հիմնական սլահանջները և բարձրագույն կրթության կառավարման արդյունավետության բարձրացման հիմնահարցերը՝ հեղինակի կողմից ուսումնասիրության են ենթարկվել կրթության որակի ապահովման հետ կապված հիմնախնդիրները: Ներկայումս բուհերի հիմնական խնդիրն է այնպիսի մասնագետների պատրաստումը, որոնց մասնագիտական պատրաստվածությունը պահանջարկ կունենա աշխատաշուկայում, իսկ կրթական գործընթացը, այս պարագայում, դիտարկվում է որպես յուրահատուկ ծառայության մատուցում: Ուսաի, առաջնային

մշակման և ստանում այս ոլորտում որակի կառավարման համակարգի և մարքեթինգային գործունեության զարգացումը:

Կրթության տնտեսագիտությունը Հայաստանում համարվում է ամենաշուտամնասիրված գիտություններից մեկը, այն դեռ գտնվում է իր զարգացման սկզբնական փուլում, և երկրորդ՝ կրթության, մասնավորապես, բարձրագույն կրթության ոլորտի տեսական և կիրառական հիմնախնդիրների քննարկումը և լուծումը դարձել է պետության և հասարակության զարգացման գերխնդիր, քանի որ բարեփոխումներն այսօր ուղղակիորեն կախված են կրթության որակից: Որակյալ բարձրագույն կրթության համակարգը մրցունակ կրթական ծառայությունների շուկա ձևավորելու նախապայմանն է: Նոր համաշխարհային չափորոշիչներին համապատասխան բարձրագույն կրթության համակարգի ձևավորումն այսօր դարձել է ժամանակի պահանջ, քանի որ որակյալ կրթությունը երկրի հասարակական զարգացման և կայուն տնտեսական աճի հիմքն է: Դրանով է պայմանավորված հետազոտության թեմայի ընտրությունը և նրա արդիականությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Աշխատանքի հիմնական նպատակը շուկայական տնտեսության պայմաններում ՀՀ բարձրագույն կրթության կառավարման կատարելագործման ուղիներին մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- ներկայացնել բարձրագույն կրթությունը՝ որպես սոցիալական և տնտեսական զարգացման գործոն,
- վերլուծել Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի ներկա իրավիճակը, վեր հանել դրա առանձնահատկությունները շուկայական տնտեսության պայմաններում,
- հետազոտել բարձրագույն կրթության կառավարման առանձնահատկությունները,
- հետազոտել բարձրագույն կրթության որակի կառավարման համակարգը, հիմնավորել կրթական չափորոշիչների անհրաժեշտությունը,
- պարզաբանել կրթական ծառայությունների շուկայի և աշխատանքի շուկայի փոխհարաբերությունները ՀՀ-ում,
- բացահայտել բուհի կրթության որակի ապահովման և մարքեթինգային գործունեության իրականացման առանձնահատկությունները,
- հետազոտել բարձրագույն ուսումնական հաստատության մարքեթինգային միջավայրը, ներկայացնել բուհերի մարքեթինգային գործունեության մեխանիզմի ներդրման և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջարկություններ:

Ատենախոսության օբյեկտը և առարկան: Աշխատանքում հետազոտման օբյեկտ է Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության որակի կառավարման համակարգը և մարքեթինգային գործունեության միջավայրը:

Ատենախոսության ուսումնասիրման առարկա են հանդիսանում ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգում մարքեթինգային գործունեության իրականացման գործիքները և մեխանիզմները, կրթության որակի կառավարման ուղղությունները:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը: Ատենախոսությունում զրված խնդիրների լուծման համար հիմք են հանդիսացել ՀՀ Կրթության և գիտության նախարարության տվյալները, օրենսդրական ակտերը, ժամանակակից հայրենական և արտասահմանյան հետազոտությունները, ճանաչված մասնագետների, գիտական դպրոցների ուսումնասիրությունների արդյունքները և փորձը:

Օգտագործվել են ՀՀ ազգային վիճակագրության ծառայության, միջազգային կազմակերպությունների տվյալները, ԻՆՏԵՐՆԵՏ տեղեկատվական ցանցը, ինչպես նաև աղբյուր են հանդիսացել մի շարք մեկնագրություններ, գիտական կոնֆերանսների թեզեր և այլ նյութեր, որոնք անմիջական ազդեցություն ունեն հետազոտության թեմայի հետ:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային մոտեցման, տրամաբանական կառուցվածքային, վիճակագրական, համեմատական վերլուծությունների, աղյուսակային և գրաֆիկական մեթոդները:

Ատենախոսության գիտական նորույթը և հիմնական արդյունքները:

Առաջադրված հիմնախնդիրների լուծման ընթացքում ստացվել են մի շարք գիտական արդյունքներ, որոնցից նորույթ պարունակողները հետևյալներն են՝

- Բացահայտվել են բարձրագույն կրթության որակի կառավարման առանձնահատկությունները՝ պայմանավորված ոլորտի նշանակությամբ և այս ոլորտում շուկայական հարաբերությունների դրսևորմամբ, ինչպես նաև առանձնացվել են բարձրագույն կրթության որակի կառավարման վրա ազդող հիմնական գործոնները:
- Մշակվել է մարքեթինգային գործունեության կառավարման բարելավման համակարգը և հիմնավորվել դրա կիրառման անհրաժեշտությունը՝ որպես բարձրագույն կրթության կառավարման համակարգի անհրաժեշտ բաղադրամաս:
- Մշակվել է բուհի կրթության որակի գնահատման վարկանիշային համակարգը և հիմնավորվել ՀՀ բուհերում դրա կիրառման նպատակահարմարությունը՝ որպես բուհի կառավարման արդյունավետության բարձրացման մեթոդ:

Ատենախոսության արդյունքների գործնական նշանակությունը: Ատենախոսությունում ստացված գիտական արդյունքները, արված առաջարկություններն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել ՀՀ կրթության համակարգի զարգացման հիմնախնդիրների լուծման հայեցակարգային մոտեցումների մշակման ընթացքում, մասնավորապես կրթական ոլորտում շուկայական հարաբերությունների զարգացման, բուհերի կառավարման համակարգերի կատարելագործման, կրթության որակի բարձրացման նպատակով:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները գեկույցվել ու քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում կազմակերպված գիտական մատչյալներում:

Ատենախոսության մեջ ներկայացված հիմնական մոտեցումները և հետազոտության արդյունքներն արտացոլված է հեղինակի կողմից հրապարակված հինգ գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքի կառուցվածքը բխում է հետազոտության նպատակից և խնդիրներից: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության տեքստի ծավալը կազմում է 148 էջ:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է բեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, աշխատանքի տեսանկյունային տեսանկյունից և տեղեկատվական հիմքերը, ինչպես նաև ներկայացվել են ատենախոսության գիտական մոտայթը և ստացված արդյունքների գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Բարձրագույն կրթության որակի կառավարման հիմնախնդիրները» խորագրով, նվիրված է բարձրագույն կրթության դերի ու նշանակության, որպես սոցիալական և տնտեսական զարգացման հիմնական գործոնի, կրթության որակի կառավարման հիմնական ուղղությունների և հիմնախնդիրների, բարձրագույն կրթության ոլորտում շուկայական հարստեղությունների ձևավորման ստանձնահատկությունների ուսումնասիրությանը:

21-րդ դարում երկրների միջև մրցակցությունը տեղափոխվում է գիտության և առաջատար տեխնոլոգիաների, ուստի և՛ բարձրագույն կրթության ոլորտ: Նշված պայմաններում միջազգային մակարդակով մրցունակ մնալու համար յուրաքանչյուր երկրի տնտեսական ռազմավարության մեջ առանձնակի կարևորություն է ստանում կրթությունը, հատկապես բարձրագույն կրթությունը՝ որպես տնտեսական և սոցիալական զարգացման հիմնական գործոն, և հետևաբար նաև կրթական համակարգը՝ որպես մարդկային կապիտալի զարգացումն ապահովող օղակ: Տնտեսական աճը պահանջում է մեծ թվով բարձրուկ մասնագետներ, ինչը մեր խնդիրներ է առաջադրում ամբողջ մասնագիտական կրթության համակարգին: Կատարված հետազոտությունների համաձայն, որքան մեծ է կրթված բնակչության բաժինը, այնքան ավելի բարձր են տնտեսական աճի տեմպերը: Այսպես, զրա շնորհիվ զարգացած երկրներն ապահովում են իրենց համախառն ներքին արդյունքի աճը մինչև 40-45%¹: ԱՄՆ-ում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կրթության հաշվին ապահովվում է ազգային եկամտի աճի շուրջ 15-20%, ընդ որում, այդ ցուցանիշի քառորդ մասն ապահովվում է բարձրագույն մասնագիտական կրթության շնորհիվ: Համաշխարհային Բանկի 192 երկրի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ տնտեսական աճի ընդամենը 16%-ն է պայմանավորված ֆիզիկական կապիտալով, իսկ 20%-ը բնական կապիտալով, մինչդեռ 64%-ը պայմանավորվում է մտքակալին և սոցիալական կապիտալով²:

Կրթական համակարգն իր էությանբ բարդ և բազմաբնույթ է, և միանշանակ բնութագրել այն հնարավոր չէ: Բարձրագույն մասնագիտական կրթությունը կարելի է բնութագրել որպես որոշակի մասնագիտական գործունեության յուրացման գործընթաց և, միաժամանակ, արդյունք: Բարձրագույն կրթությունը՝ ամբողջական համակարգ է, որը բաղկացած է կրթական ծրագրերից, կրթական հիմնարկություններից և նրանց կառավարման մարմիններից, ինչպես նաև այդ ծառայությունները ապահովներից: Կրթությունը նպաստում է նաև աճե՛ր զարգացմանը և ներառում հասարակության ընդհանուր զարգացմանը, այսինքն՝ կրթությունը, տնտեսական արդյունավետությունից բացի, ունի նաև սոցիալական արդյունավետություն: Ժամանակակից պայմաններում լայն տարածում և նոր բովանդակություն է ստանում «մարդկային կապիտալ» տեսությունը: Կրթությունը ստեղծում է այն «մարդկային կապիտալը», որը միանալով «ֆիզիկական կապիտալին» ապահովում է

¹ Востриков Н.И., Международному сотрудничеству в области науки и высшего образования крепнуть. Внешнеэкономические связи России, 2010г., www.cblves.org.ru/books/ves/7.htm


² Отчет о мировом развитии 2002, World Bank, 2002, p. 36.

արտադրողականության և որակի ավելացում³։ Այս խնդիրն արդիական է նաև Հայաստանի համար, քանի որ «Հայաստանը բնական պաշարներով աղքատ երկիր է, և հիմնական ռեսուրսը, որով կարող է մասնակցել համաշխարհային գլոբալ զարգացման գործընթացին, մարդկային կապիտալն է»⁴ : Հասարակության կրթական համակարգի, մարդկային կապիտալի որակի բարձրացումը թույլ կտան ասպիտովել Հայաստանի տնտեսության արագ զարգացումը գործունեության բոլոր ոլորտներում։

Այդ գործընթացները մշտապես պահանջում են կրթական համակարգի համապատասխան վերակառուցում։ Ուստի և մեր հասարակությունից պահանջվում է այնպիսի անհատների ձևավորում, որոնք կհամապատասխանեն այս նոր պահանջներին։ Այս ամենը հասարակական ինստիտուտների համակարգում նոր նշանակություն և բովանդակություն է տալիս բարձրագույն մասնագիտական կրթության դերին։

Ներկայումս տեղի է ունենում շուկայական հարաբերությունների ներթափանցում բարձրագույն կրթության ոլորտ՝ այսմանավորված մի շարք օբյեկտիվ պատճառներով՝ պետական բյուջետային միջոցների անբավարարվածությամբ, բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման ծախսերի լսճով, կրթության բարձր որակի ասպիտովման անհրաժեշտությամբ, բարձրագույն կրթության ստացման նկատմամբ գոյություն ունեցող մեծ պահանջարկով։ Կրթական ծառայությունների շուկային բնորոշ են մի շարք առանձնահատկություններ։ Հեղինակի կողմից առանձնացվում են հատկապես՝ կրթական ծառայություններին բնորոշ առանձնահատկությունները, բուրի ուշացումով արձագանքումն աշխատանքի շուկայի իրավիճակին, գործունեության իրականացումը միաժամանակ երկու շուկաներում, քանի որ վերջինիս գործունեությունն ուղղված է սպառողների երկու խմբերի պահանջների բավարարմանը՝ ուսանողների՝ «կրթական ծառայությունների շուկա» և գործատուների՝ «աշխատույնի շուկա», ինչպես նաև կրթական ծառայությունների մատուցման վճարի ստացումը միջանկյալ սպառողից։


Գլոբալացման արդի զարգացման պայմաններում կարևորվում է բարձրագույն կրթության որակի ասպիտովման հիմնահարցերի քննարկումը։ Բարձրագույն կրթության որակի ասպիտովման պարագայում անհրաժեշտ է բազմակողմանի մոտեցում։ Կրթության որակի բոլոր ասպեկտների փոխադարձ կապը ներկայացված է գծապատկեր 1-ում։



Գծապատկեր 1. Բարձրագույն կրթության որակի տարրերը

³ Гусейнов Дж.К., О. Делла. Американский менеджмент на пороге XXI века. М., Экономика, 1991, с. 253.
⁴ Կիրակոսյան Գ.Ն., Գլոբալացումը և դրա հետևանքները, Բանբեր ԵՊՏԵ, Սրբան, 2004, N1, էջ 10։

Որակի կառավարումն, ըստ հեղինակի, համակարգված գործողություններ են, որոնք իրականացվում են արտադրանքի (ծառայության) ստեղծման, շահագործման կամ սպառման ընթացքում դրա որակի սահմանման, ապահովման և անհրաժեշտ մակարդակի վրա պահպանման համար: Բարձրագույն կրթության որակի կառավարման համակարգը ներառում է հետևյալ գործընթացները, որոնց իրականացման հետ են կապված կառավարման հիմնախնդիրները (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Բարձրագույն կրթության որակի կառավարման մեխանիզմը

ՀՀ ինտեգրումը ԵԲԿՏ-ին ենթադրում է որակի ապահովման ազգային համակարգի ներդրումը, որը գործում է Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ՈԱԵԱ) ընդհանուր դրույթների վրա և ներառում է.

- կրթության որակի ներքին և արտաքին ապահովման ենթահամակարգերը,
- որակի ապահովման արտաքին գործակալությունները:

ՀՀ բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումների շրջանակներում 2008թ. նոյեմբերին հիմնադրվեց «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը, որը կազմակերպում և իրականացնում է որակի ապահովման ուղղված գործընթացներ: Ըստ նոր հավատարմագրման կարգի, ՀՀ տարածքում գործող բոլոր բուհերը յուրաքանչյուր հինգ տարին մեկ պետք է անցնեն հավատարմագրման պարտադիր գործընթաց, իսկ ծրագրերի հավատարմագրումը կամավոր գործընթաց է և իրականացվում է միայն բուհի՝ դրական հավատարմագրման դեպքում: Ներկայումս ՈԱԵԱ-ը Բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական Միության մասնակից անդամ է և նպատակ ունի մինչև 2015թ. դառնալ նրա լիիրավ անդամ:

Բարձրագույն մասնագիտական կրթության որակի գնահատման համակարգում կարևոր տեղ է գրավում հանրային գործոնը: Հանրության կողմից կրթական ծառայությունների արժևորման հիմքում դրվում է ոչ թե ուսումնական տեխնոլոգիայի կիրառման ներքին գործոնը, այլ հասարակության տարբեր շերտերում ձևավորված՝ կրթօջախի համբավի արտաքին գործոնը: Հեղինակի կարծիքով, վարկանիշային սանդղակներն առավել նպատակահարմար է կազմել՝ հիմնականում ընդգրկելով արտաբուհական միջավայրում ձևավորվող հետևյալ ոլորտները՝

- աշխատանքի շուկայում տվյալ բուհի շրջանավարտների պահանջարկը,
- շրջանավարտների նկատմամբ գործատուի վերաբերմունքը,
- դիստրոֆների վերաբերմունքը բուհի նկատմամբ,
- բուհի նկատմամբ դրամաշնորհներ տրամադրող կազմակերպությունների վերաբերմունքը:

Կրթության որակի գնահատման համակարգը, հատկապես, զարգացած է ԱՄՆ-ում, որտեղ, ի դեպ, բուհերի պետական հավատարմագրում գոյություն չունի⁵: Ուշադրության է արժանանում Համալսարաններից կից Բիզնեսի դպրոցների ամերիկյան ասոցիացիայի (AACSB) որակի գնահատման մեթոդաբանությունը, որը կիրառվում է համալսարանների դպրոցների որակի հանրային արժևորման ժամանակ:

Բուհերի գործունեության հանրային արժևորման վարկանիշային համակարգի կիրառումն, ըստ հեղինակի, էապես կբարելավի կրթական ծառայությունների մատուցման որակը, քանի որ յուրաքանչյուր տարի բուհերը կձգտեն բարձրացնել իրենց վարկանիշը և ամրապնդել դիրքը կրթական շուկայում: Կրթության որակի ապահովման թե ներքին և թե արտաքին համակարգերի կայացման և արդյունավետ գործունեության համար կարևորվում է մարքեթինգային գործունեության իրականացումը:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ բարձրագույն կրթության կառավարման արդյունավետության գնահատումը» գլուխը, նվիրված է ՀՀ բարձրագույն կրթության համակարգի արդի վիճակի ուսումնասիրությանը և դրա գնահատմանը, կրթական ծառայությունների շուկայի և աշխատանքի շուկայի փոխհարաբերությունների ուսումնասիրությանը, ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում մարքեթինգի ներդրման և կառավարման արդյունավետության գնահատմանը:

Հայկական կրթական համակարգն ունի 1600 տարվա պատմություն և ավանդաբար բարձր է գնահատվել, իսկ բարձրագույն կրթության համակարգն ունի ավելի քան յոթ հարյուր տարվա պատմություն: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանը կանգնեց մի շարք դժվարությունների առջև՝ ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական: Ծուկայական տնտեսական հարաբերությունների զարգացումը պահանջեց նոր մոտեցումներ ցուցաբերել ոչ միայն բարձրագույն մասնագիտական կրթության որակին, այլ նաև կրթական ծառայությունների մատուցմանը: ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում կատարվել են արմատական վերափոխումներ, եղել են ինչպես ձեռքբերումներ, այնպես էլ բացթողումներ:

Ձեռքբերումներ

- բարձրագույն ուսումնական հաստատությունների աճ,
- մասնագիտական կրթության ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերի և իրավական այլ հիմնարար փաստաթղթերի ընդունում,
- 25-64տ. քաղաքացիների շրջանում բարձրագույն կրթություն ունեցողների տեսակարար կշիռը կազմում է 22.1%, որը մոտ է ՏՀԶԿ-ի անդամ երկրների միջին ցուցանիշներին (23%)⁶,
- Եվրոպական կրթական համակարգին ինտեգրում,
- միջկառավարչական պայմանագրերի հիման վրա համատեղ կրթական հաստատությունների հիմնադրումը Հայաստանում,
- բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման նոր եղանակները արմատավորում:

Վերջին ձեռքբերումներից են՝ որակի ապահովման ռազմային համակարգի ստեղծումը և ազգային կրթության որակավորման շրջանակներում իրականացվող բարեփոխումները:


⁵ Васькина И.В., Егоршин А.П., Кучеренко В.И., Маркетинг образования: учебное пособие М: Унивсрситетская книга. Логос. 2010, с. 85.

⁶ OECD, Education at Glance, 2010

Բացորոմներ և դեռևս լուծման ենթակա խնդիրներ.

- մասնագիտական կրթության որակի անհամապատասխանություն աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին,
- կրթական համակարգի ֆինանսավորման անբավարար ծավալներ և ֆինանսների կառավարման ցածր արդյունավետություն,
- եվրոպական բարձրագույն կրթության տարածքին (ԵԲԿՏ) ինտեգրման հիմնասկզբունքներ,
- «ուղեղների արտահոսքի» աճ. դասախոսական կազմի տեղաշարժեր բարձր վարձատրվող գործունեության ոլորտներ կամ մեկնում արտասահման,
- դասախոսական կազմի ծերացման միտում,
- ամբողջ կյանքի ընթացքում ուսուցման իրականացման համար իրավական դաշտի անկատարություն և մեխանիզմների բացակայություն,
- կրթության որակն արժեքի, «արժեքրկում», որը հանգեցրեց հասարակության դաստիարակչական և մշակութային կյանքի «աղբատացման» և այլն:

Կրթության ոլորտի վիճակն բնութագրող բազմաթիվ ցուցանիշներից կարևորագույն են համարվում՝ 10 հազ. բնակչի հաշվով ուսանողների թիվը, բուհերում սովորողների ընդհանուր թվաքանակը, պրոֆեսորդասախոսական կազմի որակավորման աստիճանը, մեկ դասախոսի հաշվով ուսանողների թվաքանակը:



Գծապատկեր 3. ՀՀ բուհերում ուսանողների թվաքանակը, 10 հազ. բնակչի հաշվով⁷

Մեր հանրապետությունում 10 հազ. բնակչին ընկնող ուսանողների թիվը կազմում է շուրջ 275.3: Այդ ցուցանիշներով աշխարհում առաջատարներն են ԱՄՆ-ն և Կանադան: Այսպես՝ վերջին տարիներին Կանադայում 10 հազ. բնակչի հաշվով ուսանողների թիվը կազմել է 700, ԱՄՆ-ում՝ 540⁸, Ռուսաստանում 500⁹:

⁷ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2011, էջ 121-122:
⁸ Всемирный доклад по образованию 2007. Сравнение мировой статистики в области образования. Институт статистики ЮНЕСКО, Монреаль, 2007, с 125.

Հանրապետության բուհերում վերջին տարիներին աճել է ուսանողների ընդհանուր թվաքանակը՝ 2010-2011 ուս. տարում կազմելով 111 հազ. (նշենք, որ 2011-2012 ուս.տարում ուսանողների քանակի նվազումը պայմանավորված է եղել հանրապետությունում դպրոցական շրջանավարտների բացակայությամբ), 2005թ.-ի (97.8 հազ.) համեմատ աճել է շուրջ 13.2%-ով, ինչը ևս փաստում է ՀՀ-ում բարձրագույն կրթության նկատմամբ բարձր պահանջարկի առկայությունը: 2010-2011 ուս. տարում աճել է նաև 10 հազ. բնակչի հաշվով ուսանողների թվաքանակը՝ հասնելով 340.2-ի, սակայն հաջորդ տարիներին այն նվազել է՝ 2012-2013 ուս.տարում դառնալով 275.3, իսկ ուսանողների ընդհանուր թիվը կազմել է բնակչության 2.8%-ը: Նկատելի է նաև այն, որ տարեցտարի ավելացել է բուհ ընդունվողների ընդհանուր քանակը: Եթե 2005թ. այն կազմել էր 24.6 հազ. մարդ, ապա 2010թ.՝ 26.4 հազ.՝ աճելով գրեթե 7.3%-ով: 2012-2013 ուս.տարում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը կրճատվել է: Այդ նվազումը տեղի է ունեցել ոչ պետական բուհերի հաշվին (2011թ.՝ 51, իսկ 2013թ.՝ 42¹⁰), որը պայմանավորված էր ինչպես կրթական ծառայությունների շուկայում մրցակցության սրմամբ, այնպես էլ ԿԳՆ-ի կողմից վերջիններին նկատմամբ նոր պահանջների կիրառմամբ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնական ցուցանիշները¹¹

	2005/ 2006	2006/ 2007	2007/ 2008	2008/ 2009	2009/ 2010	2010/ 2011	2011/ 2012	2012/ 2013
Բուհերի քանակը	89	87	85	90	77	74	68	65
Ուսանողների ընդհանուր թվաքանակը (հազ)	97.8	105.8	112.2	114.4	114.6	111.0	95.3	90.1
Ուսանողները 10 հազ. բնակչի հաշվով	303.7	328.3	347.5	353.3	352.8	340.2	292.1	275.3
Բնակչության ընդհանուր քանակի նկատմամբ (%)	3.0	3.3	3.4	3.5	3.5	3.4	2.9	2.8
Ընդունվել են ուսանողներ (հազ)	24.6	25.6	26.2	27.7	26.5	26.4	7.5	21.3
Պատրասված են մասնագետներ (հազ)	13.3	15.5	17.9	26.1	23.3	23.9	24.9	24.5
10 հազ. բնակչի հաշվով	41.3	48.1	55.3	80.6	71.9	73.4	76.4	74.8

Այդ հանրապետությունում մասնագիտական կադրերի պատրաստումն իրականացվում է հիմնականում պետական բուհերի կողմից, որտեղ սովորում է ուսանողների մեծ մասը: Պետական բուհերի թիվը հանրապետությունում վերջին տարիներին աճել է հասնելով 23-ի: Ավելացել է նաև մասնաճյուղերի քանակը, սակայն պետական բուհերը կենտրոնացված են հիմնականում Երևան քաղաքում, ինչը փաստում է տարածաշրջանային զարգացման անհամաչափությունը: Պետական բուհերում, 2005-2006թթ. հասնմատությամբ (73.7 հազ.), տեղի է ունեցել ուսանողների ընդհանուր թվաքանակի աճ 24%-ով՝ կազմելով 2010-2011թթ. 91.4 հազ., սակայն 2012-2013թթ. այն նվազել է՝ դառնալով 76.7 հազ. (նվազումը

⁹ Зеедев Н.Б., Система образования в Российской Федерации: современное состояние, проблемы и тенденции развития // Проблемы современной экономики. Санкт-Петербург: 2008, №2 (26), с. 345.

¹⁰ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հունվար-մարտին, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2013, էջ 235:

¹¹ Հաշվարկված է «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» 2005-2011 տվյալների հիման վրա:

պայմանավորված է նույն հանգամանքով): Միաժամանակ, ներկայումս, պետական բուհերում սովորողները կազմում են բուհերում սովորողների ընդհանուր թվաքանակի շուրջ 84.3%-ը: Վերջին երկու տարիներից նվազել է նաև 10 հազ. քնակչի հաշվով ուսանողների թվաքանակը՝ հասնելով 275.3-ի (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

«Հ բարձրագույն պետական ուսումնական հաստատությունների հիմնական ցուցանիշները»¹²

	2005/ 2006	2006/ 2007	2007/ 2008	2008/ 2009	2009/ 2010	2010/ 2011	2011/ 2012	2012/ 2013
Պետական բուհերի թիվը	22	23	23	23	23	23	23	23
ուսանողների թվաքանակը (հազ)	73.7	81.3	86.7	89.5	91.8	91.4	80.4	76.7
Բուհերում սովորողների ընդհանուր թվաքանակի նկատմամբ (%)	75.4	76.9	77.2	78.2	80.1	82.3	84.3	85.1
10 հազ. քնակչի հաշվով	229.0	252.5	267.7	276	282.7	279.1	246.4	234.3
Բնդունվել են ուսանողներ (հազ)	18.7	19.5	20.1	22.2	22.1	22.4	6.6	19.4
Պատրաստված են մասնագետներ (հազ)	9.6	11.1	12.9	20.1	17.9	18.3	20.5	20
10 հազ. քնակչի հաշվով	29.8	34.5	39	62	55	55.8	62.9	61.1

Պետական բուհերի հետ մեկտեղ գործում են նաև ոչ պետական բուհեր: Ոչ պետական կրթական հիմնարկները տնտեսապես զարգացած երկրների մեծ մասում հանդիսանում են մասնագետների պատրաստման համակարգի կարևոր բաղադրամասը: ԱՄՆ-ում բարձրագույն կրթության մասնավոր հատվածի բաժինը ընդհանուր թվի մեջ կազմում է 72.2%, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում՝ 21.3%, Ռուսիայում՝ 26.6%, Չինաստանի Հանրապետությունում՝ 0.5%, Հունգարիայում՝ 13.9%, Ռուսաստանի Դաշնությունում՝ 37%¹³: Մեր հանրապետությունում այս ցուցանիշը կազմում է 64%: Արտերկրում դրանց երկարատև գոյությունն ապացուցել է, որ բարձրագույն կրթության ոլորտում այլընտրանքային կրթական կառույցները լիովին կենսունակ են և կարող են հաջողությամբ լուծել ամենաբարդ սոցիալ-տնտեսական խնդիրները: Սակայն տնտեսապես զարգացած երկրների փորձը չի կարելի մեխանիկորեն կիրառել հայկական կրթական համակարգում, քանի որ բարձրագույն կրթության ոլորտում դեռևս չեն ձևավորվել դասական շուկայական հարաբերությունների պայմանները: Անկատար է դեռ բուհերի օրենսդրական բազան, այն հետագա ճշգրտման և զարգացման կարիք ունի: Ոչ պետական բուհերի կառավարման, տնտեսավարման և ֆինանսավորման հարցերին վերաբերող իրավաբանական ակտերը կայացման և զարգացման փուլում են: Հատկապես, սուր է դրված սեփականության հիմնահարցը, քանի որ վարձակալական հարաբերությունների պայմաններում ոչ պետական բուհերի գոյատևումը

¹² Հաշվարկված է «Հ սոցիալական վիճակը» 2006-2013 թթ. տվյալների հիման վրա:
¹³ Седовников В.А., Тихонов А.Н., Развитие университетов в условиях рыночной экономики. М., Изд-во МГУ, 2009, с. 78:

բավականին դժվար է: Ոչ պետական բուհերն ավելի շատ կողմնորոշված են դեպի շուկա, արագաշարժ են ֆակուլտետների կազմակերպման առումով, առավել արագ են սրճագանձում սպառողի պահանջներին: Բարձրագույն կրթության ոչ պետական հաստվածը գլխավորապես հիմնվում է պետական բուհերում ձևավորված գիտամանկավարժական կարգերի վրա, որոնք ոչ պետական բուհերում աշխատում են համատեղության կարգով:

Բարձրագույն ոչ պետական ուսումնական հաստատությունների քանակը միտում ունի կրճատվելու: 2001թ. ՀՀ-ում մասնավոր բուհերի թիվը կազմել է 71¹⁴: Այս երևույթը բացատրվում է կրթական համակարգում տեղի ունեցող բարեփոխումներով և բուհերի միջև մրցակցության սրությամբ, որտեղ կրթության որակը պայմանավորում է բուհերի մրցունակությունը: Սակայն, ներկայումս ոչ պետական բուհերի քանակը գրեթե երկու անգամ ավել է, քան պետական, բայց այստեղ սովորում է ամբողջ ուսանողների ընդամենը 1/5 մասը (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

**ՀՀ բարձրագույն ոչ պետական ուսումնական հաստատությունների
հիմնական ցուցանիշները¹⁵**

	2006/2007	2007/2008	2008/2009	2009/2010	2010/2011	2011/2012	2012/2013
Ոչ պետական բուհերի թիվը	64	62	67	54	51	45	42
ուսանողների թվաքանակը (հազ)	24.4	25.5	24.8	22.7	19.5	14.9	13.4
Բուհերում սովորողների ընդհանուր բվաքանակի նկատմամբ (%)	23.1	22.8	21.8	19.9	17.5	15.6	14.9
10 հազ. բնակչի հաշվով	75.7	78.7	77.3	70.1	60	45.6	41
Ընդունվել են ուսանողներ (հազ)	6.1	6.0	5.4	4.4	3.9	1.0	1.8
Պատրասված են մասնագետներ (հազ)	4.4	4.9	5.9	5.3	5.6	4.3	4.5

Կատարված վերլուծությունը վկայում է, որ այսօր ՀՀ-ում ոչ պետական ուսումնական հաստատությունները որոշիչ դեր չեն խաղում բարձրագույն կրթության շուկայի ձևավորման գործում և դեռևս կայանալու ու զարգանալու կարիք ունեն: Ըստ Գ.Լեյվի, «մասնավոր բուհերը գործում են որակի սանդղակի ստորին մասում և բավարարում են, այսպես կոչված, ավելցուկային պահանջարկը (excess demand)»¹⁶: Սակայն այս փաստը միանշանակ ըննարկել հնարավոր չէ, և այն կրկին անգամ կարևորում է բարձրագույն կրթության ոլորտում որակի կառավարման և մարրեթինգային գործունեության ծավալման անհրաժեշտությունը: Ըստ հեղինակի, բարձրագույն կրթության շուկան չի կարելի կայացած և

¹⁴ ՀՀ սոցիալական փճակը 2006թ, ՀՀ ԱԿԾ, Երևան, 2007, էջ 106:

¹⁵ Հաշվարկված է «ՀՀ սոցիալական փճակը» 2006-2011թթ. տվյալների հիման վրա:

¹⁶ Evaluation of the degree of integration and harmonization of the south Caucasus states with the 1997 Lisbon convention., Armenian center for political studies and training, 2005, p 116

ձևավորված համարել՝ առանց մասնավոր բուհերի գոյությունը հաշվի չառնելու: Դրական արդյունքն այն էր, որ վերջիններս նպաստեցին բարձրագույն կրթությանը վերաբերող իրավական նորմերի և օրենքների փոփոխության հրատապության բարձրացմանը, բացահայտեցին ուսուցման, ֆինանսավորման նոր մոտեցումներ, որոնց նշանակությունը մեծ է ինչպես համակարգի վերահսկողության իրականացման, այնպես էլ կրթության րազարթնականության մշակման ժամանակ:

Մասնագիտական կրթության որակի բարձրացման և արդիական բովանդակության ապահովման կարևոր միջոցներից մեկը պրոֆեսորադոսսախոսական կազմի (ՊԴԿ) որակավորման բարձրացման ինստիտուտի և կայուն համակարգի առկայությունն է: ՀՀ բուհերի ՊԴԿ-ի մասնագիտական որակավորման բարձրացման և վերապատրաստման գործընթացի կարգավորման, առաջատար փորձի փոխանակման, կրթության բովանդակության և մեթոդների արդիականացման նպատակով ներկա փուլում անհրաժեշտ է բուհերի դասախոսների որակավորման բարձրացման՝ կանոնավոր գործող կառույցի ստեղծումն ու զարգացումը: Այդ կառույցի կարևորությունն ավելի է ընդգծվում՝ կապված Բոլոնիայի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության միանալու և ԵԲԿՏ ինտեգրվելու հետ:


Բուհերի տնտեսական արդյունավետությանն առնչվող հիմնական ցուցանիշներից մեկը՝ ուսանող-դասախոս հարաբերակցությունն է: Պետական բուհերում մեկ դասախոսի հաշվով ուսանողների թվաքանակը 2012թ. կազմել է 13.64¹⁷, ինչը փաստում է այն, որ ցուցանիշն ավելանալու միտում ունի: Համեմատության համար հարկ է նշել, որ ՏՀԶԿ անդամ երկրների բուհերում ուսանող-դասախոս հարաբերակցությունը միջինում կազմել է 15.8: Այսպես, ընդհանուր առմամբ, ՀՀ պետական բուհերը ՏՀԶԿ երկրների բուհերի ցուցանիշներին մոտ արդյունքներ ունեն (գծապատկեր 4): Բուհերից շատերում այդ ցուցանիշը գտնվում է 13-20 միլիակայքում, ընդ որում՝ երկու բուհ՝ ՀՊՏՀ և ԳՎՊՀ, ունեն ՏՀԶԿ միջինից բարձր ցուցանիշ: Որոշ բուհերում նշված ցուցանիշը ցածր է ՀՀ միջինից: Այն մի կողմից կարելի է բացատրել բուհերի կողմից առաջարկվող կրթական ծրագրերի բազմազանությամբ, իսկ մյուս կողմից կարող է փաստել անարդյունավետ տնտեսվարման մասին: Այս առումով առանձնանում է ԵՊԿ-ն, որտեղ այս ցուցանիշը կազմում է 2.55:

Համեմատության արդյունքում պարզ է դառնում նաև, որ մարզային բուհերը ուսանող-դասախոս հարաբերակցության ցուցանիշի տեսանկյունից արձանագրում են ՀՀ միջինից բարձր և ՏՀԶԿ միջինին մոտ արժեքներ, ինչը խոսում է նաև սահմանապակ դասախոսների համակազմի մասին: Բարձրագույն կրթության ոչ պետական ոլորտում ամենաբարձր ցուցանիշներն են ԱՄՆ-ում՝ 19.4, իսկ ցածրը՝ Իտալիայում՝ 6.3: Պետական ոլորտում, համապատասխանաբար՝ Իսպանիայում՝ 21.5 և Ավստրալիայում՝ 5.7¹⁸: Եթե նախկինում, մեկ դասախոսի հաշվով ուսանողների թվաքանակի ցուցանիշն՝ երկրի բարձրագույն կրթության համակարգը բնութագրող կարևորագույն ցուցանիշներից էր, ապա այժմ, աշխարհի զարգացած երկրներում, տեղի են ունենում զգալի փոփոխություններ, հատկապես կրթական տեխնոլոգիաների ոլորտում: Այսպես, վերը նշված նորմերը զգալիորեն բարձրացվել են, և ներկայումս ավելի կարևորվում են բոլորովին այլ կարգի չափանիշներ և

¹⁷ Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների ազգա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում. Ձեկույց/Բարձրագույն կրթության ռազմավար. հետազ. ազգ. կենտրոն-Երևան, ՓրինսիփՖո, 2012., էջ 35:

¹⁸ Galagan A.H., *Агалин преподавательского, вспомогательного и административного персонала в системах образования из рупежных стран // Социально-гуманитарные знания. М.: 2000, #5, с. 175.*

նորմեր, մասնավորապես ապահովվածությունը համակարգչային տեխնիկայով, ժամանակակից հեռահաղորդակցության միջոցներով կամ գրադարանային ֆունդով և այլն:



Գծապատկեր 4. Ուսանող-դասախոս հարաբերակցությունը ՀՀ պետական բուհերում¹⁹

Գլոբալացման գործընթացներն իրենց արտահայտությունն են գտել նաև կրթության ոլորտում: Համաշխարհային տնտեսության զարգացումը և գլոբալացման միտումների հետագա խորացումը պահանջում են կրթական ազգային համակարգերի մշտական կատարելագործում՝ գործունեության առավել արդյունավետ մեխանիզմների մշակման և ֆինանսավորման իրականացման ուղղությամբ: Հայաստանի՝ որպես կրթության բարձր մակարդակ ունեցող երկրի համար այսօր կարևորագույն խնդիր է կրթական համակարգի պահպանումը և դրա հետագա զարգացումը՝ որպես մրցունակությունն ապահովող գրավական: 2000թ. մարտի 26-ին Հայաստանը ստորագրեց Եվրախորհրդի և ՅՈՒՆԵՍԿՈ-ի առաջին համատեղ կոնվենցիան՝ Լիսաբոնի «Եվրոպական տարածաշրջանի բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման կոնվենցիան», հանձն առնելով՝ կառուցել բարձրագույն կրթության այնպիսի համակարգ, որը թույլ կտա համարվել տարածաշրջանում առաջավոր բարձրագույն կրթության համակարգ ունեցող երկրներից մեկը: Լիսաբոնի կոնվենցիայի սկզբունքներն ուղղակիորեն կապված են և արտահայտված 1998թ. Սոբորնի և 1999թ. Բոլոնիայի հռչակագրերի շրջանակներում: 2005թ. մայիսին, Բերգեն բաղադրում ՀՀ-ը ստորագրեց Բոլոնիայի հռչակագրին միանալու համաձայնագիր և, դրանով իսկ, ընդգրկվեց Եվրոպական Բարձրագույն Կրթության Տարածք (ԵԲԿՏ): Այս գործընթացի կարևորագույն

¹⁹ Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առկա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում. Ջեկույց/Բարձրագույն կրթության ռազմավար. հետազ. ազգ. կենտրոն-Երևան, Փրինսիփո, 2012., էջ 36:

որդապատճառներից մեկը կարելի է համարել մասնագիտական կրթության ավելի իլիստ կողմնորոշումը աշխատանքի շուկայի պահանջներին:

Բոլոնիայի գործընթացին մասնակցող յուրաքանչյուր երկրում, ինչպես նաև Հայաստանում, ենթադրվում է հետևյալ հիմնախնդիրների լուծում.

- եռաստիճան համակարգի ներդրում,
- կրեդիտային համակարգի հիմնում,
- շարժունակության խթանում,
- որակի երաշխավորման համակարգի մշակում:

Հեղինակը փորձել է գնահատել՝ որքանով է Հայաստանը պատրաստ ԵԲԿՏ-ին ինտեգրվելու:

Եռաստիճան համակարգի ներդրումը ենթադրում է բարձրագույն մասնագիտական կրթության (ԲԽԿ) հիմնական ծրագրերի և պետական կրթական չափորոշիչների եռաստիճան համակարգի մշակում, այն է՝ բակալավրի, մագիստրոսի և դոկտորի աստիճաններ: Սակայն պետք է նշենք, որ այսօր ՀՀ-ում բուհական երկաստիճան կրթության հետ կապված առկա է շուկայական պահանջարկի անհամապատասխանություն, որը պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

- Աշխատանքի շուկայում դեռևս տարբերություն չի դրվում բակալավրի և մագիստրոսի դիպլոմների միջև: Ստացվում է, որ մագիստրոսական կրթություն ունեցող անձը ոչ մի առավելություն չունի աշխատանքի ընդունվելիս: Բացառությունը միայն ասպիրանտուրայի ընդունելությունն է: Այսինքն՝ խնդիրը լուծված է միայն կրթության և գիտության համակարգում: Բնականաբար, այդպիսի իրավիճակն երիտասարդների մոտ անտարբերություն է առաջացնում մագիստրոսական կրթության նկատմամբ:
- Ակամս ստացվում է, որ մեր հասարակական կյանքի ոչ մի ոլորտ մագիստրոսական կրթության կարիք չունի (բացի գիտության ոլորտից), բակալավրիատի շրջանակներում ձեռք բերված գիտելիքներն ամբողջությամբ բավարարում են մեր հասարակության բոլոր ոլորտների զարգացման պահանջները, և ստացվում է, որ երկաստիճան համակարգը ներմուծվել է լոկ Բոլոնիայի համաձայնագրին միանալու և եվրոպական կրթական համակարգի ինտեգրվելու համար: Ուստի անհրաժեշտ է՝
- Հետևողական լինել և օրենսդրորեն ամրագրել բոլոր այն պաշտոնների ցանկը, որոնք զբաղեցնելու համար անհրաժեշտ է մագիստրոսական կրթություն ունենալ (հատկապես բյուջետային աշխատողների և առաջատար մասնագետների համար):
- Նպատակահարմար է մագիստրոսական կրթությունն օրենսդրորեն պարտադիր համարել քաղաքացիական ծառայության համակարգի գլխավոր և բարձրագույն պաշտոններ զբաղեցնելու համար (կամ համապատասխան մրցույթի ընթացքում մագիստրոսական կրթությունը հավասարեցնել որոշակի տարիների՝ մասնագիտական աշխատանքային ստաժի հետ):

Միասնական կրեդիտային համակարգի ընդունումը Բոլոնիայի գործընթացի անկյունաքարերից է, քանի որ այն կրթական համակարգի և որակավորումների համեմատելիության ու ճկունության նախապայմանն է: Սակայն ՀՀ-ում կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը, ի տարբերություն ԿԿՓԵՀ-ի, որը համարվում է որպես գիտելիքների պաշարի արժևորման հիմք, չի խրախուսում ակադեմիական

շարժունակությունը, որի պատճառով կրթական ծրագիրը միջազգային հատվածով քերականացած է: Ինչպես նաև.

- ✓ մեծ են բակալավրի ուսումնական ծրագրերի աշխատաձևավաները,
- ✓ ուսանողների մեծամասնությունը գերաճող տարածքներում են լսարանային ժամերով և ինքնուրույն աշխատանքի համար քիչ ժամանակ ունեն,
- ✓ ԿԿՓԵ-ի պահանջներին համապատասխան տեղեկատվական փաթեթներ ստեղծել, հրապարակել և օգտագործում է միայն բուհերի մեկ երրորդը, չնայած այն նյութական մեծ ռեսուրսներ չի պահանջում,
- ✓ ԿԿՓԵ-ի մասին բուհական հանրության իրազեկումը հիմնականում կատարվում է չհամակարգված և մեթոդապես անբավարար մակարդակով, ինչի արդյունքում դասախոսների ճնշող մեծամասնությունը գրեթե տեղյակ չէ կրեդիտային համակարգի նշանակության, հիմնական սկզբունքների և գործառույթների մասին:

Ուստի անհրաժեշտ է՝

- Ջարգացնել ակադեմիական փոխճանաչման և շարժունակության ազգային տեղեկատվական կենտրոնների (ENIC) աշխատանքը և համագործակցել նմանատիպ կենտրոնների եվրոպական ցանցի հետ:
 - Ջարգացնել «ուսանողակենտրոն» կառավարումը՝ խթանելով ուսանողների ինքնուրույն աշխատանքը:
 - Կատարելագործել կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը՝ որպես շարժունությունն ապահովող գործիք՝ հաշվի առնելով եվրոպական առաջադեմ փորձը:
 - Հայաստանի և եվրոպական համալսարանների համագործակցության համար մշակել երկկողմ և բազմակողմ ծրագրեր, ընդհանուր մոդելներ, ստեղծել մասնագիտություններ:
- ԿԿՓԵՀ-ն բարձրագույն կրթության նորաստեղծ ճարտարապետության հիմնորոշ տարրերից մեկն է: Թեև անցյալը կրեդիտային համակարգին կատարվել է բոլոր անդամ երկրների բարձրագույն կրթության համակարգերում, բայց միայն փոքրաթիվ երկրներում է ԿԿՓԵՀ-ն լիարժեք օգտագործվում՝ կրթական վերջնադրյունների և ուսանողների ընդհանուր աշխատաձևավալի հաշվառմամբ: Մնացած երկրներում կրեդիտային համակարգերը հաշվի են առնում դրանցից միայն մեկը, կամ հիմնված են լսարանային ժամերի՝ կրեդիտների վերածման ձևական գործողության վրա, ինչը թույլ չի տալիս օգտագործել ԿԿՓԵՀ-ի հիմնական առավելությունները: Հայաստանը պատկանում է այն երկրներին, որոնք դեռևս չեն հաղթահարել այս արգելքը և ԿԿՓԵՀ-ն օգտագործում են ոչ լիարժեք:

Բարձրագույն կրթության եվրոպական համակարգի բնորոշ գծերից մեկն է ուսանողների, դասախոսների, հետազոտողների և վարչական անձնակազմի ազատ շարժի: 1999-2009թթ ընկած ժամանակահատվածում ավելացել է ԵԲԿՏ ներգրավված ուսանողների թվաքանակը: Համաշխարհային կրթական շուկայում՝ արտասահմանյան ուսանողների ներգրավվածությամբ, ԵԲԿՏ-ի տեսակարար կշիռը 2009թ. կազմել է 30%, 1999թ. 25%՝ դիմաց: Նախատեսվում է, որ 2020թ. ԵԲԿՏ-ի բուհերի շրջանավարտների առնվազն 20% պետք է կրթություն ստանա արտասահմանում: Սակայն ԵԲԿՏ-ում ուսանողական շարժունությունը ունի արտահայտված «արևելք-արևմուտք» ուղղվածություն, որը խնդիր է առջացնում ուսանողների շարժունության կայունության պահպանման տեսանկյունից:

Հայաստանում իրավիճակն ուսանողների շարժունակության առումով շատ մտահոգիչ է: Խթանների փոխարեն առկա են իրավական, ծրագրային և գուտ հոգեբանական-ավստ-դական խոչընդոտներ և սահմանափակումներ: Կրթական գործընթացի կազմակերպման

կոշտ սահմանսփականումները խոչընդոտում են ուսանողների՝ մի ֆակուլտետից մյուս ֆակուլտետ, մի ուսուցման հաստատությունից մեկ այլ ուսումնական հաստատություն տեղափոխվելը նույնիսկ հանրապետության տարածքում: Ուսանողների շարժունակությունն ապահովող եվրոպական մեխանիզմները չեն գործում, իսկ երկկողմ համաձայնագրերի շրջանակներում արտասահման մեկնող ուսանողների թիվը սահմանափակ է:

Ուստի անհրաժեշտ է՝

- Ստեղծել բարենպաստ պայմաններ Հայաստանի ուսանողների համար երկրի ներսում և միջազգային շարժունակության համար:
- Ստեղծել իրավական դաշտում անհրաժեշտ լրացումների փաթեթ մերհամալսարանական և միջազգային շարժունակության խթանման համար:

Բարձրագույն կրթության ոլորտում միջազգային շարժունակության խնդիրների լուծման ժամանակ պետք է ապահովել այնպիսի լուծումներ, որ շարժը չլինի ասիմետրիկ, այսինքն՝ համեմատաբար թույլ զարգացած երկրի ուսանողները տեղափոխվեն ավելի զարգացած երկիր, իսկ փոխադարձ հոսք չլինի:

Շարժունակությունը հեշտացնող միջազգային համաձայնագրեր ստորագրելիս պետք է հաշվի առնել «ուղեղների արտահոսքի» վտանգը: Խոսքը, իհարկե, նման գործընթացի լիովին բացառումը չէ (դա ոչ միայն անհնար է, այլ որոշ առումով՝ նույնիսկ անցանկալի). ինքնամեկուսացման երևույթը, եթե դա նույնիսկ ինչ-ինչ եղանակներով հաջողվի, կբերի «քումբերանցի երևույթի»՝ երկրի կրթությանը, գիտությանը և տնտեսությանը հարվածելու նպաստակով: Խնդիրն «ուղեղների արտահոսքը» կառավարելի դարձնել է այնպիսի պայմանագրերի միջոցով, որոնք մասնագետին կխրախուսեն վերադառնալ հայրենիք: ՀՀ բուհերում սովորող օտարերկրյա ուսանողների հաշվեկշիռը ընդհանուր համակարգում 2011թ. կազմել է 3%: Ըստ վիճակագրական տվյալների՝ 2005-2008թթ. օրարերկրյա ուսանողների թվաքանակը, ի համեմատ 2000թ-ի (1302 մարդ)²⁰, ավելացել է շուրջ 4 անգամ, սակայն 2005-2011թթ. վերջիններիս թիվը կրճատվել է 38%-ով՝ 4224-ից նվազելով 2583-ի, որը հիմնականում պայմանավորված է ոչ եվրոպական երկրներից ուսանողների հոսքի կրճատմամբ: Ի տարբերություն դրան, օրարերկրյա բուհեր մեկնած վերջիններիս քանակն աճել է գրեթե 2,5 անգամ (125-ից դարձել է 315)²¹, ինչը պայմանավորված է եվրոպական երկրներ մեկնող ուսանողների հոսքի մեծացմամբ:

Որակի ապահովման համակարգերն ունեն ատանցքային դերակատարում որակի բարձր չափորոշիչների պահպանման և եվրոպական տարածաշրջանում որակավորումների համեմատելիության ու փոխճանաչման խթանման գործում: Բոլոնիայի գործընթացի շրջանակներում որակի ապահովմանն ուղղված գործողությունները հիմնականում հասցեագրված են օրենսդրական մակարդակին և ազգային գործակալությունների գործունեությանը, ինչը, ըստ հեղինակի, բերում է որակի կառավարման վայրընթաց մոտեցմանը, երբ բուհերը որակի մշակույթի զարգացման գործընթացներում առաջնորդվում են ոչ թե սեփական նախաձեռնություններով, այլ արտաքին պարտադրված պահանջներով: Իրադրությունը կարող է փոխվել, եթե դասախոսական կազմը և ուսանողները դառնան որակի ապահովման գործընթացների շարժիչ ուժը և հիմնական դերակատարները: Որակի ապահովման ռազմային համակարգի զարգացման համար անհրաժեշտ է՝

²⁰ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2005, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2005, էջ 131:

²¹ Բոլոնիայի Ա.Մ., Մանսայան Ն.Վ., Սանթրոջյան Մ.Գ., Բոլոնիայի գործընթացի իրականացումը ՀՀ պետական բուհերում. վերլուծական զեկույց/Բարձրագույն կրթության ուղի. հետազ. ազգ. կենտրոն, Եր., 2012, էջ 159:

- Նպաստել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի գործունեության զարգացմանը:
- Գործող հավատարմագրման չափանիշներն ու մեխանիզմները համապատասխանեցնել եվրոպական հավատարմագրման հիմքի վրա գործող չափանիշներին:
- Նպաստել հավատարմագրային խորհրդի աշխատանքների կազմակերպմանը՝ վերացնելով մի շարք բերություններ՝ կապված օրենսդրական դաշտի անկատարության հետ:

Կրթական ծառայությունների շուկայի առավել կարևոր հատկանիշներից է նրա գործունեության մշտական սերտ կապը և կողմնորոշվածությունը դեպի աշխատանքի շուկան: Այդ շուկաներին բնորոշ են մի շարք առանձնահատկություններ և միաժամանակ դրանց գործունեությունը փոխկապակցված է և փոխալայմանավորված, ուստի օբյեկտիվ անհրաժեշտություն է դառնում այդ շուկաների համագործակցության կարգավորման մեխանիզմների ձևավորումը և հատկապես ներկա և հետանկարային պահանջների բացահայտումն ու կանխատեսումը: Ներկայումս բարձրագույն կրթության զարգացման շարժիչ ուժը կրթական ծառայությունների շուկան է և ոչ թե՛ աշխատանքի շուկան: Բարձրագույն ուսումնական հաստատությունների և աշխատանքի շուկայի միջև կապերի զարգացման, մասնագիտական կրթության շուկայամետ բովանդակության զարգացման և կրթության որակի բարձրացման ուղղությամբ ՀՀ-ում որոշ քայլեր կատարվել են: Սակայն դրանք դեռևս բավարար չեն ցանկալի արդյունք ապահովելու համար: Բարեփոխումների ներկա փուլում կարևորվում է.

- բարձրագույն ուսումնական հաստատությունների և գործատուների միջև կապերը համակարգող և զարգացնող կառուցվածքային օղակների կատարելագործում,
- մասնագիտական պրակտիկայի արդյունավետ կազմակերպումը,
- մասնագիտական ուսումնական հաստատություններում կարիերայի զարգացման կենտրոնների զարգացումը:

Չարգացող մրցակցության պայմաններում, կրթության մարքեթինգի կիրառումը դառնում է ոչ միայն ցանկալի, այլ նաև անհրաժեշտ, քանի որ մարքեթինգը կարևոր միջոց է, որը խթանում է բուհի՝ շուկայական կողմնորոշմամբ կառավարումը: Մարքեթինգի միջոցով բուհը ոչ միայն ակտիվ արձագանքում է շուկայական երևույթներին, այլ նաև՝

- ✓ մշակում է իր զարգացման ռազմավարությունը,
- ✓ իրականացնում է նոր կրթական շուկաներ գրավելու քաղաքականությունը,
- ✓ ամրապնդում է իր դիրքերը շուկայում,
- ✓ հետազոտում է բուհի արտաքին և ներքին միջավայրը՝ բացահայտելով կրթության որակի վրա ազդող գործոնները:

Կրթության մարքեթինգը շատ արագ է զարգանում: Այն երկակի դեր է խաղում ժամանակակից տնտեսագիտության մեջ: Առաջին հերթին դա կապված է տնտեսական զարգացման մեջ կրթության կարևորությամբ: Այն սահմանվում է նաև որպես մի միջոց, որի օգնությամբ կրթական հաստատություններն ակտիվ ձևով տեղեկացնում և առաջ են տանում իրենց նպատակները, արժեքները և արտադրանքը՝ սովորողներին, ծնողներին, անձնակազմին և հասարակությանը²²: Այն կարելի է բնութագրել որպես՝ կրթական հաստատության շուկայական կողմնորոշմամբ կառավարում, որն ուղղված է այդ ոլորտում շուկայական գործընթացների կարգավորմանը և կրթական շուկայի ուսումնասիրմանը, ինչի

²² Дэвис Б., Элисон Л. Стратегический маркетинг для школ: методология и практика. М.: Экономика, 2007, с. 14


արդյունքում առավել արդյունավետ բավարարվում են այդ շուկայի բոլոր մասնակիցների պահանջմունքները և հետաքրքրությունները:

Կրթության մարքեթինգի անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ այսօր կարևոր խնդիր է կրթական ծառայությունների շուկայի իրավիճակի ուսումնասիրությունը, առավել հեռանկարային կրթական ծառայությունների բացահայտումը, գոյություն ունեցողների նորացումը, դրանց գնագոյացման մեխանիզմների մշակումը, կրթական ծառայությունների ծավալների, որակի որոշումը և այլն: Մարքեթինգի անհրաժեշտությունը պայմանավորված է նաև, ուսումնական հաստատությունների միջև մրցապայքարի առաջացմամբ և սրմամբ, դրանց մեծ թվաքանակով, ինչպես նաև վճարովի կրթական համակարգի ընդլայնմամբ և տարածմամբ:

Մտենախոսության երրորդ՝ «Բարձրագույն կրթության կառավարման կատարելագործման ծախսերը Հայաստանի Հանրապետությունում» գլուխը, նվիրված է ՀՀ-ում բուհի կրթության որակի ապահովման և կառավարման արդյունավետության բարձրացման հեռանկարներին, բուհի մարքեթինգային գործունեության զարգացմանը՝ որպես բարձրագույն կրթության կառավարման բարելավման միջոցի, բուհի կրթության որակի գնահատման վարկանիշային համակարգի ներդրման հեռանկարներին ՀՀ-ում:

Բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացն սկսվում և ավարտվում է մարքեթինգով ²¹: Մարքեթինգային կառավարման անհրաժեշտությունը բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգում պայմանավորված է որակի ապահովման գործընթացում մարքեթինգի դերակատարմամբ, որն կարելի է ներկայացնել երեք փուլերով՝

1. Որակի ապահովումը մինչ կրթական ծառայության իրացումը
2. Որակի ապահովումը կրթական ծառայության իրացման գործընթացում
3. Որակի ապահովումը կրթական ծառայության հետիրացումային շրջանում





(I)



(II)

²¹ Основы маркетинга: теория и практика. Маркетинговое управление и управление маркетингом. www.good-reklama.ru/osnovymarketinga/20.html



Գծազատկեր 5. Մարքեթինգը կառավարման համակարգում

Առաջին գծապատկերում մարքեթինգը հանդես է գալիս որպես կառավարման գործառնություններից մեկը: II՝ որպես կառավարման հիմնական գործառնություն, III՝ որպես կառավարման կարևոր գործառնություն, IV՝ իրականացվում է մարքեթինգային կառավարում:

Ուսումնական հաստատության մարքեթինգային կառավարման համակարգը կարելի է ներկայացնել երեք ենթահամակարգերի տեսքով²⁴.

- կրթական ծառայությունների շուկայի վերլուծություն,
- ուսումնական հաստատության մարքեթինգային ծրագրի մշակում,
- ուսումնական հաստատության մարքեթինգային ծրագրի իրագործում:

Մարքեթինգային կառավարման նպատակն է բուհի զարգացման համար նոր շուկայական հեռանկարների բացահայտումը և դրանց օգտագործումը, շուկայի նոր պահանջներին համապատասխան «հին» գործունեության վերափոխումը: Որոշ ուսումնական հաստատություններ ներդրում են ուսուցման նոր տեխնոլոգիաներ, կիրառում են նոր մեթոդներ և ձևեր, մյուսները՝ փորձում են մատուցել նոր կրթական ծառայություններ, բացահայտում են նոր կրթական շուկաներ և այլն:

Մարքեթինգի ընտրված հայեցակարգի և բուհի մարքեթինգային ռազմավարության բարեհաջող իրականացման գործում մեծ է բուհի մարքեթինգային գործունեության կառավարման կազմակերպական կառուցվածքի դերը: Յանկացած բուհ ձգտում է ձևավորել մարքեթինգային ծառայության այնպիսի կառուցվածք, որն առավելագույն չափով կնայստի իր առջև դրված մարքեթինգային նպատակների իրագործմանը:

Ուսումնական հաստատության *մարքեթինգային միջավայրը* մարքեթինգային համակարգի վրա ներգործող ներքին և արտաքին գործոնների համախումբ է: Ի տարբերություն տնտեսության մյուս ճյուղերի, կրթության ոլորտում մարքեթինգային միջավայրը հսկայական նշանակություն և առանձնահատկություններ ունի, որոնք, ամենից առաջ, կապված են նրա յուրահատկությունների և ծառայության ոլորտին պատկանելու հետ: Ուսումնական հաստատության մարքեթինգային միջավայրը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի՝

²⁴ Васькина И.В., Егоршин А.П., Кучеренко В.И. Маркетинг образования: учебное пособие М Университетская книга. Логос, 2010, с. 112.

1. ներքին միջավայր (միկրոմիջավայր),
2. արտաքին միջավայր՝
 - ուղղակի ներգործության (մեզոմիջավայր),
 - անուղղակի ներգործության (մակրոմիջավայր):

Բարձրագույն կրթության որակի արտաքին և ներքին ապահովման համակարգերի զարգացման գործում բուհի մարքեթինգային միջավայրի վերլուծությունն ունի էական նշանակություն, քանի որ բացահայտվում են նաև կրթության որակի ապահովման վրա ազդող գործոնները: Մարքեթինգի ներքին միջավայրն ուսումնական հաստատության ներսում ամփոփված մարքեթինգային գործունեությունն է, իսկ արտաքին միջավայրը՝ բուհի նկատմամբ բոլոր արտաքին ազդեցությունները: Մարքեթինգի ներքին միջավայրը ընդգրկում է այն անձանց և ուժերին, որոնցով մարքեթինգ է իրականացվում տվյալ ուսումնական հաստատության ներսում՝ ներառելով օբյեկտիվ և սուբյեկտիվ բազմաթիվ գործոններ: Այսինքն՝ մարքեթինգի ներքին միջավայրն ամփոփում է այն ամենն, ինչն ազդում է բուհի մարքեթինգի կազմակերպման և իրականացման վրա:

Ուսումնական հաստատության արտաքին միջավայրն իրենից ներկայացնում է այն արտաքին ուժերի, գործոնների և պայմանների ամբողջությունը, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում են կազմակերպության գործունեության վրա: Բուհի վրա ազդում են արտաքին միջավայրի բազմաթիվ գործոններ, որոնցից յուրաքանչյուրի դերն ու նշանակությունը տարբեր է: Բուհի մակրոմիջավայրի գործոններն են՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, գիտատեխնիկական, աշխարհագրական, ազգային և այլն, որոնք խմբավորելով կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական գործոնները՝ սոցիալական, գիտատեխնիկական, տնտեսական և քաղաքական գործոնները, որոնց վերլուծությունը կոչվում է “STEP” վերլուծություն: STEP վերլուծական մեթոդը հնարավորություն է տալիս ուսումնական հաստատությանը իրականացնել իրավիճակի գնահատում և կանխատեսել արտաքին միջավայրի գլխավոր գործոնների զարգացումը: Բուհն ունակ չէ ամփոփապես ազդելու արտաքին միջավայրի վրա, սակայն վերջինիս ազդեցությունը բուհի գործունեության վրա ակնհայտ է: Այս վերլուծությունը նպատակահարմար է անցկացնել կրթական հաստատության զարգացման ռազմավարությունը մշակելիս: STEP վերլուծության արդյունքները կարելի է օգտագործել նաև կրթական ծառայությունների շուկայում հեռանկարային մասնահատվածներ ընտրելիս:

Կրթության մեզոմիջավայրի վերլուծությունը կենսական կարևոր նշանակություն ունի բուհի հետագա գործունեության կազմակերպման ժամանակ, քանի որ այն իրականացվում է տարեկան կտրվածքով, իհարկե, ուսումնական հաստատության ղեկավարության որոշմամբ: Կրթական հաստատության ներքին միջավայրի վերլուծությունը հանդիսանում է գլխավոր և, միաժամանակ, մարքեթինգային միջավայրի ուսումնասիրման վերջին փուլը: Ներքին միջավայրի վերլուծության առավել տարածված մեթոդ է SWOT վերլուծությունը²⁵: Այն ուսումնական հաստատության ներքին և արտաքին միջավայրերի իրավիճակային վերլուծություն է, ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների ու սպառնալիքների գնահատումը: SWOT վերլուծության նպատակն է բացահայտել ամենավտանգավոր այն արտաքին և ներքին գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ բուհի առաջնային նպատակին հասնելու՝ կրթական ծառայության բարձր որակ ապահովելու, գործընթացի վրա: Մինևույն ժամանակ այն հնարավորություն է ընձեռում վեր հանել ներքին և արտաքին այն հնրավորությունները, որոնք անհրաժեշտ է օգտագործել կրթական ծառայությունների

²⁵ Песоцкая Е., Маркетинг услуг: Краткий курс. СПб: Питер, 2010г., с. 98.

շուկայում կայուն դիրքեր ունենալու համար: SWOT վերլուծության արդյունքում բացահայտվում են բուհի համար էական նշանակություն ունեցող հիմնահարցերը և մշակվում են հնարավոր գործողությունները, որոնք ուղղված են բուհի դիրքի ամրապնդմանը և զարգացմանը: Ընդ որում, դրանք լուծման հնարավոր յուրաքանչյուր տարբերակի համար կարող է պահանջվել զուգահեռաբար իրականացվող համապատասխան ռազմավարությունների մշակում: Հարկ է հիշել, որ միևնույն գործոնը տվյալ բուհի համար կարող է լինել զարգացման հնարավորություն, եթե, իհարկե, ճիշտ ժամանակին կիրառվի, հակառակ պարագայում այն կարող է վերածվել սպառնալիքի, եթե մրցակիցն առաջինը օգտագործի այն:

Բարձրագույն կրթության համակարգում շուկայական նոր գործիքների կիրառման միջոցով հնարավոր է դառնում ոչ միայն բարձրացնել կրթության որակը, այլ նաև կառավարման արդյունավետությունը, ինչը հնարավոր է իրականացնել քանակական վերլուծության ենթադիվով կրթական ծառայությունների շուկան: Քննարկելով կրթության որակի ապահովման հիմնախնդիրները՝ հեղինակն առաջարկում է իրականացնել նաև ֆուկուլտետների վարկանիշային գնահատումը:

Ֆակուլտետների գործունեության գնահատման վարկանիշային համակարգը թույլ է տալիս քանակապես գնահատել բուհի զարգացման դրական միտումները, ամրապնդել ու զարգացնել դրանք, ինչպես նաև հայտնաբերել գործունեության բացթողումները, աշխատանքի կազմակերպման թերությունները, կանխատեսել հետագա զարգացումները: Գիտակրթական գործընթացի որակի գնահատման համար առանձնացնում ենք երեք փոխադարձ կապված ցուցանիշների խմբեր՝

1. Գիտական հետազոտությունների մակարդակը, որակը և արդյունավետությունը՝ «Գիտություն» անվանակարգում:
2. Կրթական գործընթացի մակարդակը, որակը և արդյունավետությունը՝ «Կրթություն» անվանակարգում:
3. Ռեսուրսաապահովվածությունը և զարգացման ինտեսիվությունը՝ «Ջարգացում» անվանակարգում:

Երեք խումբ ցուցանիշների ընտրությունը պայմանավորված է նրանով, որ վերջիններս հնարավորություն են տալիս գնահատել բուհի տարբեր ստորաբաժանումների, ֆակուլտետների, ամբիոնների գործունեության որակը նաև դրանց զարգացման ընթացքում, համեմատել միմյանց հետ, իրականացնել «բենչմարքինգ», այսինքն՝ վերլուծել բուհի կառուցվածքային միավորի գործունեության հաջողությունը պայմանավորող գործոնները և համեմատել նրա հիմնական մրցակիցների հետ: Բոլոր ցուցանիշները չափելի են և բաժանվում են փոխադարձաբար միմյանց հետ կապված երկու խմբերի՝

1. ստորաբաժանման սլոտենցիալ հնարավորությունների ցուցանիշներ.
2. ստորաբաժանման փաստացի գործունեությունը բնութագրող ցուցանիշներ:

Քանի որ այս խմբերը սերտ փոխկապակցված են, ցուցանիշների ամփոփման ժամանակ, ստացված արդյունքները բազմապատկվում են: Եթե վերլուծության ժամանակ պարզվում է, որ ուսումնասիրվող ստորաբաժանումը չի իրականացնում համապատասխան գործունեությունը, ապա ինչպիսի հնարավորություններ է վերջինս ունենա. տվյալ դեպքում, քննարկվող գործունեության բնութագրիչը ստանում է զրոյական արժեք: Բնութագրիչների քանակական գնահատման համար առանձնացվում են ցուցանիշների այնպիսի խմբեր, որոնցում իրենց հերթին առանձնացված են անկախ չափելի փոփոխականներ. որից հետո միայն ցուցանիշների ամփոփման մեթոդի օգտագործմամբ ստանում ենք վերջնական

արդյունքները: Ընդ որում, ցուցանիշների ամփոփումը կատարվում է վերջիններիս համապատասխան արժեքները ստանալուց հետո:

Ներկայացնենք բուհի ֆակուլտետների վարկանիշների հաշվարկման սկզբնական (մանրամասն ներկայացված է առեմախոսությունում):

«Գիտություն» անվանակարգում ֆակուլտետի վարկանիշը որոշվում է հետևյալ կերպ՝

$V_{\text{ֆակ գիտ.}} = M_{\text{գիտ.}} \cdot U_{\text{գիտ.}}$

$M_{\text{գիտ.}}$ - գիտական պոտենցիալ

$U_{\text{գիտ.}}$ - գիտահետազոտական աշխատանքների իրականացման փաստագրի ակտիվությունը

«Կրթություն» անվանակարգում ֆակուլտետի վարկանիշը որոշվում է հետևյալ կերպ՝

$V_{\text{կրթ.}} = M_{\text{կրթ.}} \cdot U_{\text{կրթ.}}$

$M_{\text{կրթ.}}$ - կրթական գործընթացի պոտենցիալ հնարավորությունները

$U_{\text{կրթ.}}$ - կրթական գործընթացի մասնակիցների փաստացի ակտիվությունը

«Ձևադաշտում» անվանակարգում ֆակուլտետի վարկանիշը որոշվում է հետևյալ կերպ՝

$V_{\text{ձևադ.}} = M_{\text{զարգ.}} \cdot U_{\text{զարգ.}}$

$M_{\text{զարգ.}}$ - զարգացման պոտենցիալ հնարավորությունները

$U_{\text{զարգ.}}$ - զարգացման իրական արդյունքները

Այս մեթոդը «բաց» է և ենթակա է փոփոխությունների: Հնարավոր է ներառել նաև նոր բնութագրիչներ, որոնք առավել գործնական են տվյալ պահին, կամ էլ չհաշվառել սլակաս կարևոր ցուցանիշները: Ֆակուլտետների ձևավորված վարկանիշների հիման վրա կատարվում են հետևություններ և եզրահանգումներ համապատասխան անվանակարգում: Ընդ որում որոշվում են ամենաբարձր, ամենացածր մակարդակները, առանձնացվում են այն ցուցանիշները, որոնք առավել կարևոր ու էական են համապատասխան ֆակուլտետների համար:

Ատենախոսության «Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

1. Ներկայումս, առավել քան երբևիցե, հասարակական զարգացումը պայմանավորված է երկրի տնտեսության, գիտության, սոցիալական ոլորտի ապահովվածությամբ բարձրորակ մասնագիտական կադրերով, ուստի կարևոր ազգային առաջնայնություններից է դառնում բարձրագույն կրթությունը: Հայաստանի Հանրապետությունը, որպես զարգացման առաջնային և հիմնական գործոն, պետք է ընտրի կրթական ոլորտը:
2. Բարձրագույն կրթական համակարգի մրցունակ լինելու միակ գրավականը կրթության որակն է: Կրթության որակի ապահովումն անհրաժեշտ փուլ է բարձրագույն կրթության կառավարման գործընթացներում: Անհրաժեշտություն է համարվում որակի ներքին և արտաքին ապահովման համակարգերի ձևավորման գործընթացի խթանումը և դրանց հետագա զարգացումը:
3. Բարձրագույն կրթությունը կարգավորող իրավական դաշտը փոփոխությունների կարիք ունի, քանի որ ընդունված օրենքները հակասում են միմյանց, ինչը խոչընդոտում է բուհերի գործունեությունը: «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը և «Կրթության մասին» ՀՀ օրենքն առաջին հայացքից սահմանում են բարձրագույն կրթության ընդհանուր կառավարման շրջանակները և բուհերին լայն ինքնավարություն են ապահովում: Սակայն, ինքնավարության հետ կապված, հակասություններ կան նույնիսկ բարձրագույն կրթության օրենքում, և դրա ենթաօրենսդրական ակտերում: Ավելին, «Պետական ոչ առևտրային

կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը և «Պետական կառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքը հակառակ են ընդունված օրենքներին և լիազորում են ՀՀ կառավարությանը՝ որպես հիմնադրի և ՀՀ ԿԳՆ-ը՝ որպես վերահսկող մարմնի, անտեսել բուհերի ինքնավարությունը: *Անհրաժեշտ է վերանայել իրավական դաշտի գործունեությունը՝ վերասահմանել կառավարության և բուհերի դերերը:* Նոր սահմանված համակարգը կառավարությանը պետք է տա քաղաքականությունը ձևավորելու, վերահսկելու և գնահատելու կարողություններ, որոնցով մի կողմից բուհերին կառաջնորդի դեպի ազգային նպատակների իրականացմանը, մյուս կողմից, վերջիններիս հնարավորություն կտա արդյունավետ իրականացնել ինքնավարությունը և պահանջել բուհերից առավել հաշվետու լինել ուսանողների և հանրության առջև:

4. ՀՀ-ում բարձրագույն կրթության համակարգի և նրա տարրերի առանձնահատկություններն են՝ կրթության որակի անհամապատասխանություն աշխատանքի շուկայի պահանջներին, գործատուների ցածր մասնակցությունը, տնտեսության կառուցվածքում գիտատար արտադրության ցածր բաժինը, տնտեսավարող սուբյեկտների ոչ բավարար ֆինանսական հնարավորությունները, գործատուների միջոցների ներգրավման լծակների և մեխանիզմների բացակայությունը, գիտահետազոտական աշխատանքների իրականացումից ստացվող եկամուտների ցածր չափաբաժինը, պետական ծախսերի բաժնի կրճատումը:
5. Ինտեգրումը ԵԲԿՏ պահանջում է մի շարք հիմնահարցերի լուծում, խոչընդոտների վերացում, ընդունված օրենքների վերանայում՝ կապված մագիստրոսական կրթության, շարժունակության, ինչպես նաև կրթության միասնականության ապահովման հետ: Ըստ կարևոր է, որ մասնագիտական կրթության համակարգը դիտարկվի որպես համալսարանական և ոչ համալսարանական մասնագիտական հաստատությունների համապարփակ ցանց: *Անհրաժեշտ է ստեղծել մասնագիտական կրթության միասնական, համապարփակ համակարգ, որը կներառի միջին մասնագիտական կրթությունը, բարձրագույն կրթությունը և գիտահետազոտական ոլորտը, և նպատակ կունենա նպաստել վերջիններիս ինտեգրմանը:*
6. Բարձրագույն կրթության համակարգում շուկայական հարաբերությունների զարգացումը, կրթական ծառայությունների շուկայի ձևավորումը, ինչպես նաև ոլորտի կարևոր սոցիալական նշանակությունը, առաջադրել են կրթության որակի ապահովման հիմնախնդիրների բացահայտման և դրանց լուծման հնարավոր ուղիների մշակման անհրաժեշտությունը: Այս ոլորտի ամենանշանակալի զարգացումներից մեկը՝ որակի ապահովման ազգային համակարգի ստեղծումն էր, որն ունի հետագա զարգացման կարիք: *Անհրաժեշտ է նպաստել այս համակարգի գործունեության զարգացմանն ու կատարելագործմանը՝ ստեղծելով բարենպաստ միջավայր միջազգային մակարդակով ճանաչելի գործակալություն դառնալու համար: Ինչպես նաև, պետք է մշակել որակի ապահովման նոր մոդել, որտեղ որակի ապահովման ձևն ու պատասխանատվությունը տեղափոխվեն ԿԳՆ-ի կողմից կրթական և ուսումնական ծրագրերի պետական իրիստ չափորոշիչների սահմանելուց՝ դեպի մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից որակի չափանիշների և ուսման արդյունքների սահմանումը:*
7. Կրթական ծառայությունների շուկայի առավել կարևոր հատկանիշներից է նրա գործունեության մշտական սերտ կապը և կողմնորոշվածությունը դեպի աշխատանքի շուկան: Այդ շուկաներին բնորոշ են մի շարք առանձնահատկություններ և

միաժամանակ դրանց գործունեությունը փոխկապակցված է և փոխալայնմանակորված, ուստի օբյեկտիվ ամհրաժեշտություն է դառնում այդ շուկաների համագործակցության կարգավորման մեխանիզմների ձևավորումը և, հատկապես, մերկա և հեռանկարային պահանջների բացահայտումն ու կանխատեսումը: Ներկայումս բարձրագույն կրթության զարգացման շարժիչ ուժը կրթական ծառայությունների շուկան է և ոչ թե՝ աշխատանքի շուկան:

8. Կրթական ծառայություններին և կրթական շուկային բնորոշ են մի շարք առանձնահատկություններ. Հատկապես՝ ուշացումով արձագանքումն աշխատանքի շուկայի իրավիճակին, բուհի գործունեության իրականացումը միաժամանակ երկու շուկաներում, բանի որ բուհի գործունեությունն ուղղված է սպառողների երկու խմբերի պահանջների բավարարմանը՝ ուսանողների «կրթական ծառայությունների շուկա» և գործատուների «աշխատանքի շուկա», ինչպես նաև կրթական ծառայությունների մատուցման վճարի ստացումը միջանկյալ սպառողներից:
9. ՀՀ բարձրագույն կրթության համակարգում իրականացրած ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս կանխատեսել այս համակարգի հետագա զարգացումը հետևյալ միտումներով.
 - որոշ ոչ պետական բուհերի գործունեության ընդհատում,
 - պետական և ոչ պետական բուհերի հարաբերակցության հավասարեցում,
 - խոշոր կրթական հաստատությունների մասնաճյուղերի բացում և ընդարձակում ՀՀ մարզերում,
 - բարձրագույն կրթություն ատացողների թվաքանակի աճ,
 - պետական բուհերում ուսուցման վճարվի համակարգում սովորողների տեսակարար կշռի մեծացում,
 - կայացած ուսումնական հաստատությունների մրցունակության բարձրացում՝ որակյալ մասնագետների ներգրավմամբ:
10. ՀՀ-ում մատուցվող կրթական ծառայությունների շուկան ներկայումս հանդես է գալիս հետևյալ առանձնահատուկ գծերով, ըստ որոնց կարելի է կատարել մի շարք առաջարկություններ ծառայությունների ոլորտի բարելավման ուղղությամբ.
 - կրթական ծառայությունների տարբեր ոլորտներ զարգացվածության տարբեր աստիճաններ ունեն, ուստի մոտ ապագայում ամհրաժեշտ է լորջ ուշադրություն դարձնել պետական առաջնահերթություն համարվող հանրակրթության և միջին մասնագիտական կրթություն մատուցող ծառայությունների զարգացվածության մակարդակների համահարթեցմանը,
 - արագ զարգացման կարիք ունի բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների այն ոլորտը, որն առավել նորագույն տեխնոլոգիաների հենքի վրա է ձևավորվում և առավել մրցունակ է հատկապես միջազգային շուկայում:
11. Կրթության որակի բարելավման և բուհի արդյունավետ կառավարման համար, կարևորվում է նոր շուկայական գործիքների և մեխանիզմների օգտագործումը՝ ինչպիսինն է մարքեթինգային գործունեությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում, որի իրականացումը հնարավորություն կտա կրթության ոլորտում շուկայական հարաբերությունների արագ ներթափանցմանը և կիսանի բուհի շուկայական կողմնորոշմամբ կառավարումը:
12. Լենհրաժեշտ է ՀՀ բուհերում ներդնել գործունեության մարքեթինգային մեխանիզմներ և վերլուծել մարքեթինգային միջավայրը՝ օգտագործելով SWOT և STEP վերլուծական

մեթոդները, ներդնել բուհի կրթության որակի վարկանիշային գնահատման համակարգը: Ընդգրկելով վերոնշյալ գործառույթները կրթական ծառայությունների մատուցման մարքեթինգային համակարգում՝ հնարավորություն կստեղծվի ամրապնդել բուհական համակարգի գործունեության մրցակցային դիրքերը կրթության շուկայում:

13. Կարևորվում են նաև կրթության որակի ապահովման փուլերի ճիշտ իրագործումը՝ գնահատումը և վերահսկողությունը: Գնահատման իրականացումը պետք է հիմնված լինի կրթական հաստատությունների թույլ և ուժեղ կողմերի, վտանգների և հնարավորությունների, ինչպես նաև վարկանիշային ցուցանիշների վրա: Այն պետք է վերհանի բուհերի թերությունները և ճանապարհներ առաջարկի դրանք վերացնելու և հետագա աշխատանքները արդյունավետ ձևով կազմակերպելու համար: Այստեղ ամիրաժեշտ է կիրառել այն երկրների փորձը, որոնք արդեն ունեն կայացած բարձրագույն մասնագիտական կրթական համակարգ և որակի գնահատման հաջողված տարբերակներ: Կրթության որակի ամբողջական գնահատումը պետք է ներառի դասախոսական գործընթացի գնահատումը, կադրերի արհեստավարժության և նյութատեխնիկական բազայի մակարդակի գնահատումը: Այս տարատեսակ գնահատականները ստեղծում են կրթական հաստատության որակի ընդհանուր պատկեր, որը հնարավորություն է տալիս այդ հաստատությանն ունենալ օբյեկտիվ ներուժային նկարագիր և մշակել ծրագրեր իրենց հաստատության կրթական որակները բարձրացնելու ասպարեզում:
14. Հրատապ ենք համարում ուսումնասիրել որակն ապահովող կրթական չափորոշիչների դերն ու նշանակությունն այս համակարգում: Ներկայումս ԳՏԱ-ի և տնտեսական աճի վերելքի պայմաններում կրթության զարգացման տեմպերը որոշ դեպքերում արդեն հետ են մնում հասարակության զարգացման տեմպերից և արդյունքում ուսուցման համակարգում ձևավորվում է «ոչ տեղին, ուշացած կամ կիրառապես ժամկետանց» գիտելիքների ուսուցման վտանգ: Ինչպես նաև, կրթական չափորոշիչների կիրառման նախապայման է աշխատանքի միջազգային շուկայի ընդլայնման և զլոբալացման պահանջով կրթական միասնական համակարգի ստեղծումը:
15. Կուտակված խնդիրները կարող են ամբողջությամբ խորտակել կրթության ոլորտի բոլոր նախկին ձեռքբերումները, ինչպես նաև՝ հետընթաց ապրելու սպառնալիք հանդիսանալ: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է, հատկապես, 21-րդ դարի առաջին քառորդում, հաշվի առնել հետևյալ հրամայականները.
 - կրթության դերի և նշանակության արժեքորոշում սոցիալ-տնտեսական գերակայությունների համակարգում,
 - դասախոսական կազմի սոցիալական և տնտեսական կարգավիճակի բարձրացում,
 - կրթության և գիտության, մշակույթի, ինչպես նաև տնտեսության բոլոր ճյուղերի միջև փոխադարձ կապի զարգացում և խթանում,
 - կրթության բնագավառում քաղաքացիների իրավունքների պաշտպանություն և ակադեմիայի ընդարձակում:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ
հրապարակումներում.

1. Մելիքյան Ա.Վ. «Աղքատության ընտանեկան նպաստի համակարգի վերլուծությունը»
// «Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում»
/հանրապետական գիտաժողովի նյութեր/ Երևան, «Նահապետ», 2004, էջ 132.
2. Մելիքյան Ա.Վ. «Հարավային Կովկասի երկրների եվրոպական բարձրագույն
կրթության տարածք ինտեգրման հիմնախնդիրները» // «Տնտեսական
վերափոխումների արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները
Հայաստանի Հանրապետությունում» /գիտաժողովի նյութեր/ Երևան, «Նահապետ»,
2006, էջ 376.
3. Մելիքյան Ա. Վ. «ՀՀ բարձրագույն կրթության համակարգի արդի վիճակը» //
«Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի
Հանրապետությունում» / գիտաժողովի նյութեր / Երևան, «Էդիթ Պրինտ», 2007, էջ
298.
4. Վարդանյան Կ.Ե., Մելիքյան Ա.Վ. «Հայաստանի Հանրապետության բարձրագույն
կրթության ինտեգրումը եվրոպական տարածքին» // «Մանկավարժության և
հոգեբանության հիմնախնդիրներ», Երևան, «Զանգակ-97», 2008, էջ 51.
5. Մելիքյան Ա.Վ «Կրթական չափորոշիչների դերն ու նշանակությունը ՀՀ բարձրագույն
կրթության որակի ապահովման գործընթացում», // «Մանկավարժության և
հոգեբանության հիմնախնդիրներ», Երևան, «Զանգակ-97», 2009, էջ 36.

**АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ ВЫСШИМ ОБРАЗОВАНИЕМ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - "Экономика, управление хозяйством и его отраслями".

Защита диссертации состоится 19-ого сентября 2013 года, в 15³⁰ на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. М.Налбандяна 128.

Р Е З Ю М Е

Диссертация посвящена совершенствованию управления высшим образованием РА. Управление высшим образованием неразрывно связано с качеством подготовки специалиста, что является очень актуальной задачей в настоящее время. Таким образом, эффективное управление высшим образованием, есть эффективное управление качеством подготовки специалистов. Вступление современного общества в инновационную фазу развития резко повышает значение образования для успешного экономического развития. Конкурентные преимущества государства в современном мире в значительной степени определяются качеством человеческого капитала, что требует от государства проведения политики, направленной на повышения эффективности образовательной системы. Усиление интеграции систем образования, внедрение новых информационных технологий, увеличение объема и расширения ассортимента образовательных услуг, требует особого внимания к исследованию социально-экономических проблем формирования и развития рынка образовательных услуг. Республика Армения, имея ограниченные природные ресурсы и инвестиционные возможности, должна избрать сферу образования в качестве приоритетной или как основного фактора, обеспечивающего стабильное развитие, что предъявляет новые, более высокие требования к системе высшего профессионального образования. Одновременно, ввиду ряда объективных причин, происходит активное внедрение рыночных отношений в сферу высшего образования, что в свою очередь требует особого внимания на управление высшего образования. Этим обусловлено появление целого комплекса, требующих решения проблем в числе которых первоочередное значение имеют вопросы управления высшим образованием. Исходя из этого, целью исследования явилось комплексное рассмотрение актуальных проблем управления высшим образованием РА и разработка новых путей совершенствования.

В соответствии с целью исследования в диссертации поставлены и решены следующие задачи:

- ✓ уточнить место и роль образования на современном этапе развития мирового хозяйства,
- ✓ проанализировать факторы, влияющие на качество высшего образования,
- ✓ исследовать возможности повышения эффективности управления качеством образования,
- ✓ обосновать экономическую целесообразность и разработать практические рекомендации по использованию маркетинга в системе управления вузом.

Основные научные результаты и новизна диссертационного исследования заключается в обосновании и разработке основных направлений развития управления качеством высшего образования, а также разработке комплекса мер, способствующих повышению его эффективности. В работе выявлены:

- Выявлены особенности управления качеством высшего образования, обусловленные значением данной сферы и внедрением рыночных отношений, а также выделены основные факторы, влияющие на управление качеством образования.
- Разработана улучшенная система управления маркетинговой деятельностью и обоснована необходимость ее применения, что позволит повысить эффективность управления развитием сферы образования в условиях реформирования отрасли.
- Разработана рейтинговая система оценки деятельности вуза и обоснована целесообразность ее применения как метода повышения эффективности управления вузом

THE MODERN PROBLEMS OF MANAGEMENT OF HIGHER EDUCATION OF RA

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the speciality 08.00.02. "Economics, Management of the Economy and its Branches".

The defense of the thesis will take place on September 19th, 2013 at 15³⁰ o'clock at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics: 128 M.Nalbandyan Street, Yerevan 0025.

ABSTRACT

The dissertation is dedicated to the research of urgent management problems of higher education of RA, and how to work out possible ways to solve these problems. For solving the urgent problems of higher education system of RA it is necessary to develop productive economic relationships in this field and to work out new approaches for the productive management of this system. Nowadays the main problem of higher education institutions is the training of such specialists whose professionally being trained will be in demand in labour market, and educational process in this case is viewed as a special service approach. The system of qualified higher education is the prerequisite to form a market of competitive educational services, and the only pledge of being competitive in education system is the quality of education, provision of which is a necessary stage in the management process. The stimulation of the process which provides the formation of the internal and external systems of quality is necessity.

The quality assurance of education is the essential goal of Bologna process. In the the Berlin communique the Ministers of the Bologna process signatory states invited the European Network for Quality Assurance in Higher Education (ENQA) in cooperation with the EUA, EURASHE, and ESIB, to develop an agreed set of standards, procedures and guidelines on quality assurance and to explore ways of ensuring an adequate peer review system for quality assurance and accreditation agencies or bodies, and to report back through the Bologna Follow-Up Group to Ministers in 2005. Integration with Europe demands a solution of a number of issues which are related to a Master of Education degree, the provision of movement and educational unity. Nowadays the penetration of market relations into the field of higher education is taking place provided to a number of objective reasons, they are dissatisfaction of state budget means, the increase of expenses to train specialists, the high demand to receive education. One of the most

important features of the market for educational services is its orientation to the labour market for the quality improvement of higher education in RA and the productive management of higher education institutions, the usage of new market tools is an important thing, such as marketing, its implementation will stimulate the management how to orientate in the market of higher education institutions.

In the research the main factors have been revealed which affect on the quality of education, and the management system of marketing has been worked out as a necessary component of the system providing the quality of education, as well as the features of educational services of the market and its subjects have been revealed. The practical usage of SWOT and STEP analyses has been based on the context which reveals the major factors affecting on the quality of education of higher education institutions of RA. The assessment system of the quality of education of higher education institutions has been worked out and estimated as a method for increasing marketing management productivity of higher education institutions. We've tried to highlight the role of accreditation, accreditation bodies, independent audit, as well as the public role in the process of quality assurance of higher education of RA.

